MSSP ծառայությունների դադարեցում (Գործողության ծանուցում)

Անուն՝ _____ Ամսաթիվ՝ _____

Հասցե՝ _____

MSSP ID՝_____

Ի պատասխան՝ Տարեցների համար Բազմաֆունկցիոնալ ծառայությունների ծրագրի (MSSP) նպաստների դադարեցում

Հարգելի _____,

Սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգիրք, 9560 և հաջորդները լիազորում են Տարեցների համար Բազմաֆունկցիոնալ ծառայությունների ծրագիր գործունեությունը՝ նախատեսված 60 տարեկան կամ ավելի բարձր տարիքի, Medi-Cal-ի ստացողների, համայնքում բնակվող և բուժքույրական խնամքի հաստատությունում (NF) տեղավորվելու համար հավաստագրված կամ հավաստագրման ենթակա անձանց համար: Ավելին, խնամատարներին սպասարկելու արժեքը չի կարող մշտապես գերազանցել բուժքույրական խնամքի հաստատության արժեքը: Դուք ստանում եք MSSP ծառայություններ այս օրենքի համաձայն:

Մենք վերանայել ենք տրամադրված տեղեկատվությունը և որոշել, որ _____ դրությամբ Դուք իրավասու չեք MSSP ծառայությունների համար, քանի որ՝

2. ☐ Դուք չեք բնակվում MSSP սպասարկման տարածքում:
3. ☐ Դուք այլևս չեք ցանկանում ստանալ MSSP ծառայություններ:
4. ☐ Դուք այլևս չեք համապատասխանում բուժքույրական խնամքի հաստատությունում տեղավորման չափանիշներին:
5. ☐ Այլ՝_____
6. ☐ Դուք այլևս իրավասու չեք Medi-Cal-ի համար (կամ չեք կարող վճարել ծախսերի Ձեր մասնաբաժինը):
7. ☐Դուք ընդունվել եք հիվանդանոց կամ բուժքույրական խնամքի հաստատություն:
8. ☐Ձեզ տանը ծառայություններ մատուցելու գնահատված արժեքը գերազանցում է բուժքույրական խնամքի հաստատությունում լրիվ դրույքով խնամքի արժեքը:
9. ☐Ձեր Medi-Cal-ի իրավասությունը փոխվել է օգնության կոդի, որն այլևս չի որակավորում Ձեզ MSSP ծառայություններից օգտվելու համար:
10. ☐Դուք չեք ցանկանում կամ չեք կարողանում օգտվել խնամքի կառավարման ծառայություններից:

ԵԹԵ ԴՈՒՔ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՔ ԱՅՍ ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ, ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ԽՆԴՐԵԼ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԱՐԴԱՐ ԼՍՈՒՄՆԵՐ ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱՎՈՐԻ ԱՌՋԵՎ: ԼՍՈՒՄՆԵՐ ԽՆԴՐԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ ԿՑՎՈՒՄ ԵՆ:

Այս գործողությունը պահանջող նահանգային օրենքները գտնվում են Կալիֆորնիայի Կանոնակարգերի օրենսգրքի 22-րդ վերնագրի, 3-րդ բաժնի, 1-ին ենթաբաժնի, 2-րդ գլխի, 18-րդ հոդվածի 50951 բաժնի և Սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգրքի 10950-10965 բաժիններում:

Հետևյալ նշված կարգավիճակը վերաբերում է Ձեզ՝

1. ☐ Դուք կարող եք վստահ լինել, որ MSSP-ի դադարեցումը չի ազդի այլ բժշկական կամ սոցիալական ծառայությունների վրա, որոնք Դուք իրավասու եք ստանալու Կալիֆորնիայի Medi-Cal ծրագրի կամ այլ հանրային նպաստների ծրագրերի միջոցով:

2. ☐ Քանի որ Medi-Cal ծառայությունների համար Ձեր ներկայիս իրավասությունը կապված է MSSP-ի համար Ձեր շարունակական իրավասության հետ, Դուք այլևս իրավասություն չեք ունենա Medi-Cal-ի համար այս չափանիշի համաձայն: Դուք կարող եք կապվել Ձեր տեղական վարչաշրջանի սոցիալական ապահովության գրասենյակի հետ՝ պարզելու համար, թե արդյոք Ձեր Medi-Cal նպաստները կարող են շարունակվել այլ իրավասության չափանիշներով:

Շնորհակալություն ենք հայտնում MSSP-ին Ձեր մասնակցության համար: Դուք կարող եք դիմել MSSP ծառայությունների համար ապագայում, եթե կարծում եք, որ դարձել եք իրավասու:

Խնդրում ենք զանգահարել _____հետևյալ

հեռախոսահամարով՝_____, եթե հարցեր ունեք:

Հարգանքներով՝

_____

Կենտրոնի տնօրեն